ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

18 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 22** քաղ. Մոսկվա

««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ արձանագրության նախագծի մասին

1. Հավանություն տալ ««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ արձանագրության նախագծին:

2. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ իրականացնելու սույն կարգադրության 1-ին կետում նշված

արձանագրության ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը՝ 2016 թվականի հոկտեմբերին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում այն ստորագրելու նպատակով:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ սկսել ««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման աշխատանքները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում այն հրապարակելու օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

Նախագիծ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները (այսուհետ՝ անդամ պետություններ), նպատակ հետապնդելով համագործակցել ««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի Համաձայնագրի շրջանակում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Երկարաձգել ««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի գործողության ժամկետը՝ 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը։

Հոդված 2

Սույն Արձանագրությունը ժամանակավոր կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից և ուժի մեջ է մտնում սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Այն անդամ պետության համար, որի օրենսդրությամբ նախատեսված չէ միջազգային համաձայնագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, սույն Արձանագրությունը կիրառվում է այդպիսի անդամ պետության կողմից այնպիսի ներպետական ընթացակարգերի կատարման օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է _____ քաղաքում 2016_ թվականի _____ «___»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը՝ որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետությանն ուղարկում է դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից	**Բելառուսի Հանրապետության կողմից**	**Ղազախստանի Հանրապետության կողմից**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության կողմից**